

եան և հարաւային կողմերը Յիսուսի հանդիպումը և Ղազարու յարութիւնը և երուսաղէմի մուտքը, հիւսիսային և արեւմտեան կողմերը՝ էջը կը փնտռուի եւ անտարակոյս նաև արմաւենիի ոստերով թափօրը)։

Այժմ հոն կը գտնուի մատուռ մը որ կը կոչուի Բեթփագէ։ Բեթանիոյ արևելեան կողմը ցոյց կը տրուի Djakheh el-Azar «Ղազարու յաւանակ»ը ըսուած քարանոր մօտ յոյները շինած են իրենց Ed-Djenène ըսուած վանքը, որ կ'ըսուի նաև Bourdj el-Ekhamâr «Իշուև աշարակը»։ Այս քարը նոյնիսկ կրնայ ըլլալ անոր 1400 ին Բեթանիոյ արևելքը՝ Սիմոն բորտի տանը մօտ ցոյց տրուեցաւ նշանակութեամբ այն տեղւոյն ուր Յիսուս ըսաւ (Յովհ. ԺԱ. 34) «Ո՛ւր եղիք զնա (Ղազար)»։ Այս տեղը Յիսուսի և Մարթայի հանդիպման տեղը ըլլալով՝ յետոյ միացուած է իշուև վրայ հեծնելու յիշատակին (Dal. 327-329)։

Clermont Ganneau գիտնականը «Ղազարու յաւանակի» քարի մասին կուտայ հետեւեալ ծանօթութիւնը. «Բեթանիոյ (էլ Ազարիէհ) արևելքը կը գտնուի ժայռուտ սարահարթ մը՝ ծածկուած գերեզմաններով, խոռոչներով, պատերով ևն. կարելի է մտածել թէ երբեմն այդտեղ բնակելի էր։ Ան Khirbet անունը ունէր պարզապէս, միայն սարահարթին ծայրը տեղական աւանդութիւնը ցոյց կուտայ կիսով հողին մէջ թաղուած ժայռի կտոր մը որ կը կոչուի Ղազարոսի էջը, ըսելով թէ կենդանին քարացած է Յիսուսի հեծնելէն յետոյ։ Այս տեղը հաւանական է որ ըլլայ խընդրական Բեթփագէն (P. E. F. 1874, էջ 269)։

1573ին ուղեգիր-ուխտաւոր Rauwolff կը գրէ թէ Բեթանիոյ մօտ ցոյց կը տրուի լայնկեկ քար մը որուն վրայ՝ կ'ըսուի թէ նստած է Մարթա՝ սպասելով